ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ՀՀ Կոտայքի մարզի «Քասախի Ռ. Գևորգյանի անվան N 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «Ֆիզկուլտուրայի» /21 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է ՝ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
-դիմում (Ձև 1),մեկ լուսանկար 3x4 չափի,
-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
-անձը հաստատող փաստաթուղթ,
-«Հանրակրթության մասին»ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը(առկայության դեպքում),
-ինքնակենսագրություն(Ձև 5),
-այլ պետությունների քաղաքացիները՝ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
-ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ,
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ,
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2021թ. նոյեմբերի 3-ից մինչև նոյեմբերի 16-ը ներառյալ,ամեն օր՝ժամը 10:00-15:00,բացի շաբաթ,կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 22-ին ժամը 14:00-ին,Կոտայքի մարզի Քասախի Ռ. Գևորգյանի անվան N1 միջնակարգ դպրոցում:

Հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ,գ.Քասախ,Ս.Ջալալյան 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝094.91-16-02 հեռախոսահամարով: